ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Երվանդ Վարոսյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգը հաստատելու մասին հարցը,

նկատի ունենալով այն, որ Պալատի նախագահը ներկայացրել է կարգի նախագիծը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի կանոնադրության 16.5 կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- *Հաստատել «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգը՝ համաձայն հավելվածի:*
- *Ուժը կորցրած ճանաչել Պալատի խորհրդի 07.09.2007թ. թիվ 14/1-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգը:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

15 հունվարի 2014թ.
թիվ 01/7-Լ
ք.Երևան